

ԻՄԱՍՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ՈՒ ԲԱՅԱՏՐՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Բ. Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Նորհրդային իշխանության տարիներին Հայաստանում ստեղծվել են տասնյակ բառաբանագրական աշխատություններ, որոնց մեջ բացառիկ տեղ են գրավում բացատրական բառարանները: 20-ական թվականների սկզբին Ստ. Մալխասյանը ձեռնամուխ է լինում հայոց լեզվի բառարան կազմելու աշխատանքին¹: Հայերեն բացատրական բառարանի բառացանկը ամփոփելով նախորդ հայերեն բացատրական, մասամբ նաև թարգմանական ու մտնագիտական-տերմինաբանական բառարանների բառամթերքը (գրաբար, միջին հայերեն, ժամանակակից հայ բարբառներ), այնուամենայնիվ, արդի գրական հայերենի բառապաշարի ողջ հարստությունը բավարար չափով չի ընդգրկել: Այն միայն մասամբ է լրացնում հայ նոր գրական լեզվի բառագանձը: Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը 50—80-ական թվականներին սկսեց «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի»² կազմումն ու հրատարակումը: Նույն տիպի երրորդ բառարանը Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանն է»³:

Բառերի իմաստները բացատրելու համար անհրաժեշտ է, նախ, դրանք տարբերակել ու դասակարգել: Տարբեր տիպի բառարաններում իմաստների տարբերակումն ու դասակարգումը չեն կարող չունենալ յուրջ տարբերություններ: Լեզվի գործուն բառապաշարը, ինչպես հայտնի է, անընդհատ փոփոխվում է, կատարելագործվում: Գործուն բառապաշարի բառերում կարող են կորչել մի քանի իմաստներ, երբեմն և հիմնականները, և հիմնական իմաստի տեղը կարող են հանդես գալը նորերը:

Բացատրական բառարանի կարևոր խնդիրներից մեկը իմաստների դասակարգումն է: Իմաստների հերթականության հարցը բառարանագրական պրակտիկայում կարևորներից մեկն է: Բառի իմաստների տարբեր տիպերը և հատկապես բառապաշարի գործուն շերտը պահանջում են տարբերակող մոտեցում⁴:

Նշված բառարանների համեմատությունը ցույց է տալիս, թե որ իմաստներն են պահպանվել, որոնք են դուրս մնացել կամ հնացել: Այսպես՝ Ստ. Մալխասյանի բառարանում ազատ բառի տակ բերված է 12 իմաստ, ԺԲԲ-ում՝ 15, իսկ ԱԲԲ-ում՝ 16: Ընդ որում ՀԲԲ-ում որպես առաջին հիմնական իմաստ բերված է «նշանավոր տոհմի՝ բարձր դասակարգի պատկանող անձ, ազնվական»: Այդ իմաստը ԺԲԲ-ում վերջինն է, հնացած նշումով, ԱԲԲ-ում այն ընդհանրապես չի նշվում: ԺԲԲ-ում և ԱԲԲ-ում կան ազատ բառի 3 իմաստներ, որոնք չկան ՀԲԲ-ում: Այսպես՝

Ազատ — 18. Չամուսնացած, ամուրի:

14. Սիրած կամ նշանած չունեցող: 16. Ազատություն: [ԱԲԲ]:

Ազատ — 10. Չամուսնացած, ամուրի:

11. Ազատության մեջ, չձերբակալված: 14. Ազատամիտ, առաջադիմական [ԺԲԲ]:

Դուռ բառի համար Ստ. Մալխասյանի բառարանում բերված են հինգ իմաստներ, իսկ

¹ Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, Եր., 1944—45 թթ., հ. 1—4: Այսուհետև՝ ՀԲԲ:

² Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Եր., 1969—1981, հ. 1—4: Այսուհետև՝ ԺԲԲ:

³ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976 թ.: Այսուհետև՝ ԱԲԲ:

⁴ С. И. Ожегов. Лексикология и лексикография, Культура речи, М., 1974, с. 179.

մյուս երկու քառարաններում՝ 18-ական իմաստներ: Մալխասյանցի քառարանում բերված իմաստներն են.

1. Բացվածք՝ որևէ պարսպած կամ ցանկապատած տեղ մտնելու ելնելու համար: 2. Հորհնվածք, որով փակում են այդ բացվածքը: 3. Լեռների մեջ նեղ բացվածք, կիրճ: 4. Անցք, ճանապարհ, ելք: 5. Արքունի պալատ կամ ստյան: Ակադեմիական և Էդ. Աղայանի քառարաններում ներառված են այս հինգ իմաստները, ինչպես նաև 18 նոր իմաստներ: Այսպես՝ 1) Պահարանի՝ գրասեղանի արկի ևն փակելու փեղկ: 2) ՓխԲ. Տուն, շենք: 3) ՓխՆՆ. Տուն, ծուխ, տնտեսություն: 4) ՓխԲ. Անցման տեղ, հաղորդակցության ճանապարհ սահմանափակից երկրների միջև: 5) ՓխԲ. Որևէ տեղի՝ երկրի մուտքը՝ սահմանը: 6) Դռան մտի տարածությունը: 7) Թվարանական գործողություն: 8) Դարպաս: 9) Ծքամուտք: 10) մկ. տղ. հող. Դռանը: 11) Նարդի խաղի մեջ՝ գրաված՝ բռնած տուն: 12) ՓխԲ. Որևէ տեղի՝ տեղանքի երկրի ևն մատույց:

Պոլիս քառի տակ ՀԲԲ-ում բերված է 18 իմաստ, ԺԲԲ-ում՝ 21, իսկ Աղայանի քառարանում՝ 22:

Ստորև տրվում է քննարկվող քառարաններում երեսուն բազմիմաստ բառերի իմաստների քանակը:

Բառերը	ՀԲԲ	ԺԲԲ	ԱԲԲ	Բառերը	ՀԲԲ	ԺԲԲ	ԱԲԲ
ազատ	12	15	16	գալ	16	29	33
աղբյուր	8	11	12	գլծ	18	15	33
այրել	9	15	18	գիր	8	11	15
անել	15	5	9	գունի	18	21	22
այք	13	12	17	գնալ	14	33	31
առնել	14	5	9	գործ	22	14	25
աստիճան	14	12	17	դնել	28	39	40
բուն	12	18	10	դուռ	5	18	18
բարի	19	11	12	ելնել	29	28	27
բարձր	19	17	28	երես	17	17	25
բարձրանալ	11	20	28	գարկել	25	34	32
բարձրացնել	12	12	28	դնդունել	13	38	32
բաց	15	21	25	ոճթացք	10	12	12
բերսն	13	21	16	թաթ	13	14	15
բռնել	25	32	34	թեթն	15	40	29

Ի տարբերություն լեզվի ինստիտուտի և Էդ. Աղայանի քառարանների, Մալխասյանցի քառարանում իմաստները տրված են հնագույնից նորը: Բառիմաստի հին լինելը ցույց է տրված **⊙** նշանով:

Այսպես՝ **արձակուրդ** քառի համար սկզբում բերված է հին իմաստը, ապա՝ նորը: Արձակուրդ — 1**⊙** Տ. արձակումն: 2. Պաշտոնյային ժամանակավորապես պարսպումներից ազատելը՝ հանգստի կամ այլ կարիքի համար ևն: Կամ՝ **Բացատրություն** — **⊙**1. Ի բաց տալը, հանձնելը, ավանդելը: **⊙**2 Ի բաց դնելը, զատելը, որոշելը, բաժանելը: 3 **Մուր**՝ անհասկանալի բանը հասկանալի դարձնելը, բացահայտելը, պարզաբանություն, մեկնություն ևն:

Բառիմաստների դասավորության այս կարգը օգնում է բառիմաստի զարգացման պատմությանը հետևելուն:

Բառարաններում, որպես կանոն, գլխաբառի բացատրության ժամանակ սկզբում տրվում են քառի ուղղակի իմաստները, ապա՝ փոխաբերական: Այսպես՝

Աթաժանդ,

1. (Համք) Մառցատեսակ, թափամեղիկ, շողողուն, ամենակարծր համք, քաղկացած զուտ բնածուխից: Յուր հատկությունների պատճառով ամենաթանկագին քարն է: 2. **Պոլի**. Փայլուն, ցոլացող իր [ՀԲԲ]:

Փանն,

1. Ոսկու՝ արծաթի՝ թանկագին իրերի քանակ՝ պահած: **⊙**2. Այն տեղը, ամանը, որտեղ այդ իրերը պահված են: 3. Գետնի տակ կմ մի այլ տեղ թաքցրած ոսկի, արծաթ, թանկագին իրեր:
4. Պետության դրամական հարստություն, եկամուտներ, գույք:
5. **Պոլի**. Մեծ արծանիք ունեցող, թանկագին, հազվագյուտ քան ևն [ՀԲԲ]:

Բերան,

1. Երկու ծնոտների միջև ընկած խոռոչը շրթունքներից միմյև ըմպան: 2. Շրթունքների գծագրությունը՝ կտրվածքը:
3. Երակ, կլափ, կտուց: 4. Ուտելու՝ ճաշակելիքի գործարան: 6.

ՓԽԲ. Կտրող գործիքների սայր: 7. Ամանի՝ անոթի վերևի բաց մասը: 8. Քարայրի՝ հորի բացվածքը: 9. Խողովակաձև առարկաների ծայրերի բացվածքներից յուրաքանչյուրը: 10. Հրագեղների փողի ծայրի այն բացվածքը, որտեղից դուրս է գալիս գնդակը: 11. **ՓԽԲ.** Խոսող անձ, մարդ: 12. Սկիզբ: 13. Առջևը, դեմը: 14. **ՓԽԲ.** Ծանկը, ճիրանը, ձեռքը: 15. Եզր, եզերք: 16. **ՓԽԲ.** Լեզու: 17. Մուտք, դուռ: 18. **ՓԽԲ.** Կողմ կն [ԺԲԲ]:

Աղբյուր,

1. Ակունքից բխող ջուր: 2. Ակ, ակունք: 3. Աղբյուրի շրջակայքը, աղբյուրը որպես ջրի գնալու վայր: 4. Հոսող ջուր, որ բերվում ու հոսեցվում է որոշ տեղում: 5. Կառուցվածք, որից հոսում՝ ծորում է բերված ջուրը: 6. **ՓԽԲ.** Անձ՝ առարկա՝ երևույթ կն, որից օգուտներ՝ քարիքներ են ստացվում: 7. **ՓԽԲ.** Որևէ դրական հատկություն կամ որևէ բան որևէ բան առտորեն ունեցող, երևույթ՝ մարմին՝ անձ կն: 8. **ՓԽԲ.** Որևէ ուսումնասիրության համար անհրաժեշտ տեղեկություններ պարունակող հուշարձան: 9. **ՓԽԲ.** Նորության, տեղեկության առաջին հաղորդողը, սկզբնաղբյուր: 10. **ՓԽԲ.** Պատճառ, առիթ: 12. ած. **ՓԽԲ.** Զինք, հստակ, վճիտ, կն [ԱԲԲ]:

Ազգային լեզվի բացատրական բառարանների հիմնական խնդիրը բառապաշարի ընտրությունն է և բառարանում զետեղված բառերի իմաստների բացատրությունն: Բառը քննադատող մյուս տարրերը միայն լրացնում են նրան:

Բառերի բացատրության եղանակները մի քանիսն են.

ա) Նկարագրական-տրամաբանական եղանակ, երբ կոնկրետ ձևակերպմամբ սահմանվում են բառի իմաստային բոլոր առանձնահատկությունները: Այսպես՝

Ատել — 1. Մեկի վերաբերմամբ՝ ունենալ զգացմունք, որ թելադրում է նրան չարիք ցանկալ՝ զգվանք ու արհամարհանք զգալ դեպի մեկը. չհարողանալ հաշտ ճայել նրա վրա՝ գործ ունենալ նրա հետ: 2. Համակրել, հակառակ լինել, գաբշել՝ խորշել մի բանից [ՀԲԲ]:

Արտել — 1. Համատեղ աշխատանքի նպատակով միևնույն արհեստն ունեցող մարդկանց արտադրական ընկերակցությունը՝ որոշակի շահաբաժնով և ընդհանուր պատասխանատվությամբ [ԺԲԲ]:

Բացատրագիր — գրություն, զեկուցագիր, որով անհրաժեշտ տեղեկություններ են հաղորդվում տվյալ դեպքի՝ իրողության՝ արարքի կն մասին [ԱԲԲ]:

Բացատրական ընդհանուր, բանասիրական բառարաններում հանրամատչելի ձևով տրվում են տերմինների գիտական, տեխնիկական, մասնագիտական և այլ մեկնություններ, սահմանումներ ու պարզաբանումներ:

Բացատրության այս եղանակը մեծ չափով կիրառված է Ստ. Մալխասյանցի բառարանում: Օրինակ՝

Լուսին — Երկրագնդին ամենամերձավոր մոլորակը, որ իբրև արբանյակ պտտվում է երկրի շուրջը և գիշերները լուսավորում է երկիրը:

Լուսինը սեփական լույս չունի, այլ լույսն ստանում է արեգակից կն:

Սակայն այդ տեսակետից կատարյալ պետք է համարել Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը»: Օրինակ՝

Արևադարձություն — Կենդանական և բուսական մարմինների հակումը՝ դառնալը դեպի արևի ճառագայթները (դրական ա.) կամ նրանցից շրջվելը (բացասական ա.): Քանի որ բույսերի այդ հակումը արևի և արհեստական լույսի նկատմամբ նույնական է, այժմ գործածում են ավելի ընդհանուր անվանում՝ լուսադարձություն (ֆոտոտորպիզմ) [ԱԲԲ]:

Պիրեկտորիա — Որոշ կառավարությունների անվանում (օր. Ֆրանսիայում՝ 1795—1799 թթ. բուրժուական հեղափոխության ժամանակ) [ԱԲԲ]:

Եղանակ — 1. Մթնոլորտի վիճակը (ամպամածություն, խոնավություն, տեղումներ, օդի ջերմություն կն) տվյալ տեղում և ժամանակում: 2. Երկրային ոլորտում Արեգակի տեսանելի շարժման և դրանով պայմանավորված՝ քնության փոփոխություններին համապատասխանող՝ տարվա երեքական ամիս ընդգրկող չորս շրջաններից յուրաքանչյուրը (գարուն, ամառ, աշուն, ձմեռ) [ԱԲԲ]:

բ) Բառիմաստի բացատրության հոմանիշային եղանակ, ըստ որի բացատրվող բառի ճշանակությունը բացահայտվում է հոմանիշով: Բացատրվող հոմանիշը պատկանում է հաս-

կացությունների, առարկաների նույն շրջանին, ինչ բացատրվող բառը: Անհրաժեշտ ճշտության հասնելու համար հոմանիշային շարքից բերվում են հաճախ երկու, երեք, անգամ չորս հոմանիշներ, որոնք ճշտելով մեկը մյուսին, հասնում են անհրաժեշտ նպատակին⁵:

Բառիմաստի բացատրության հոմանիշային եղանակը զգալի տեղ է գրավում քննարկվող բառարաններում: Հաճախ բառի բացատրության նկարագրական-տրամաբանական եղանակին հաջորդում է հոմանիշային բացատրությունը, որն ավելի դյուրացնում, հասկանալի է դարձնում տվյալ բառի իմաստը: Այսպես՝

Աղքատ — 1. Նա, որ գուրկ է ապրուստի անհրաժեշտ միջոցներից կմ հազիվ է ճարում, չքավոր, **խեղճ, տնանկ** [ՀԲԲ]:

Բերված երեք հոմանիշներից միայն չքավոր-ն է ճշտության բացատրում աղքատ բառի իմաստը, իսկ մնացած երկուսը միայն մասամբ:

Ամբար — 1. Ծիճվածք, որի մեջ պահում են ընդեղեններ և այլուր, **շտեմարան, մթերանոց** [ՀԲԲ]:

Մթերանոց-ը ճշտությամբ չի բացատրում ամբար բառի իմաստը, քանի որ մթերանոցը նախատեսված է միայն մթերքներ պահելու համար, իսկ ամբար-ը ավելի լայն իմաստ ունի:

Աշխարհածավալ — Ամբողջ աշխարհով ծավալված, **աշխարհասփյուռ** [ԺԲԲ]:

Գեղաճարդար — Գեղեցիկ հարդարված, գեղեցիկ հարդարանք ունեցող, **վայելույ** [ԺԲԲ]:

Աշխարհասփյուռ-ը ամբողջությամբ չի բացատրում **աշխարհածավալ** բառի իմաստը, քանի որ կարելի է ասել **աշխարհասփյուռ** հայություն, սակայն չի կարելի ասել **աշխարհածավալ** հայություն:

Կամ **վայելույ**-ը գործածվում է տվորական խոսքում, իսկ **գեղաճարդար**-ը ավելի հատուկ է գեղարվեստական խոսքին:

Գեղադարար — գեղեցիկ կանաչով պատված, **կանաչագարդ** [ԱԲԲ]:

Կանաչագարդ-ը ամբողջությամբ չի բացատրում **գեղադարար** բառի իմաստը: Սովորական խոսքում կարելի է ասել **կանաչագարդ** դաշտ, մարգագետին, բայց երբ ասում են **գեղադարար** դաշտ, մարգագետին, ունկնորի երևակայությունը ավելի է պայծառանում:

Երբեմն բառիմաստի բացատրությունը կատարվում է միայն հոմանիշներով: Տվյալ եղանակը հավասարապես կիրառվում է քննարկվող երեք բառարաններում: Այսպես՝

Ահեղ — Ահարկու, ահավոր [ՀԲԲ]:

Բարեզեղ — Վայելչագեղ, չքնաղ [ՀԲԲ]:

Ազատ — 1. Անկախ, ինքնիշխան: 2. Ջերմ: 3. Ընդարձակ, լայն [ԺԲԲ]:

Անարգ — Անպատիվ, ստոր, նվաստ [ԺԲԲ]:

Աշխույժ — 1. Զվարթ, առույգ, կենսուրախ:

2. Եռանդուն, գործունյա:

3. Սաստիկ, զորեղ, բուռն [ԱԲԲ]:

Աղմուկ — 1. Գոռում-գոչում, ժխոր [ԱԲԲ] ևն:

Այս եղանակը ոչ բոլոր դեպքերում է իրեն արդարացնում: Հոմանիշների միջոցով բացատրությունը կարող է սխալ առաջացնել, որովհետև բացարձակ հոմանիշներ զարգացած գրական լեզուներում այնքան էլ շատ չկան: Անճշտություն կարող է առաջանալ նաև այն պատճառով, որ հոմանիշը, որով վկայակոչվում է տվյալ բառի իմաստի բացատրությունը, հաճախ բազմիմաստ է: Ինքնին հասկանալի է, որ եթե բացատրության մեջ առանձնացվում է հոմանիշի այն իմաստը, որը պետք է ընտրել այդ դեպքում, ապա սխալի հավանականությունը կրճատվում է: Սակայն մեծ մասամբ բառարանները չեն պարունակում անհրաժեշտ ցուցումներ այդ մասին⁶:

Բառի նշանակությունը ավելի հստակ պատկերացնելու, բառիմաստի յուրացումը դյուրացնելու նպատակով շատ դեպքերում բառի բացատրությունից կամ հոմանիշներից հետո քննարկվող բացատրական բառարաններում բերվում են նաև բառի հակահիշները, օրինակ՝

Ջով, ան. Ախորժեյի պաղություն ունեցող, թեթևակի սառն, բարեխառն: **Հկո. տաք, յոգ. ցուրտ** [ՀԲԲ]:

Դերմակ, ան. Սպիտակ, ձյունի, կաթի գույնով: **Հկո. սև** [ՀԲԲ]:

Բղջախոհ, ան. Վավաշոտ, ցանկասեր, տոփասեր, **հկնշ. Բղջախոհ** [ԺԲԲ]:

Աջ — Ձախի հակառակ կողմը գտնվող, **հկնշ. ձախ** [ԺԲԲ]:

Բացատրության ճշված եղանակը ավելի սակավ է կիրառված էղ. Աղայանի բառարանում:

⁵ Д. И. Арбатский. Русский язык в школе, 1970, № 3, с. 26—31.

⁶ Ю. Д. Апресян. Изв. АН СССР, СЛЯ, 1969, вып. I, с. 13.

գ) Բույսերի և կենդանիների դասի, ընտանիքի բացատրության դեպքում թվարկվում են այն օբյեկտները, որոնք անվանվում են տվյալ բառով: Այսպես՝

Միջատ — 1. Միջատների դասին պատկանող կենդանի (ճանճ, մեղու, մրջյուն ևն) [ԱԲԲ]:

Սողուն — 1. Սողունների դասին պատկանող ողնաշարավոր կենդանիների մի դասի անվանումը, որին պատկանում են **օձերը, մողեսները, կրիաները, կոկորդիլոսները** [ԱԲԲ]:

Երկշաքիլ — Շաղկաւերմ բույսերի դաս, որոնց սաղմում երկու սերմնային շաքիլներ
Երկշաքիլավոր | կան: Երկշաքիլ բույսերն են՝ **լոբին, բակլան, սիսեռը ևն** [ԺԲԲ]:

Քիթեռնածաղիկներ — Աստղածաղիկների դասին պատկանող տունկերի կարգ... որոնց մեջ մտնում են **ոլոռը, ոսպը, լոբիան, բակլան, առվույտը, ապպաստը, վիկը, քիսամը, եղջերենին ևն** [ՀԲԲ]:

Խեցեմորթ — Որևէ մանր ցամաքային կմ ջրային կենդանի, փափկամորթ, որ պատած է խեցիով: **Կրիան, ոստրեն, խխունջը** խեցեմորթներ են [ՀԲԲ]:

դ) Հղման կամ վկայակոչման եղանակ, երբ հղվում է մեկ ուրիշ բառի, որը իմաստով մոտ կամ նույնն է: Հղում կատարվում է

1) երբ առկա են բառի հնչյունական տարբերակները, օրինակ՝

Բոթել | տե՛ս Բոթել [ԱԲԲ]

Բոթթոթել |

Կնձկնձալ, տե՛ս **Կնձկնձալ** [ԺԲԲ]:

Այծամամձև, **Տ. Այծեմամձև** [ՀԲԲ]:

2) երբ առկա են բառային կրկնակները, այդ դեպքում հղումը կատարվում է այսպես՝
ա) բարբառային բառը հղվում է գրականին, օրինակ՝

Անաջող | տե՛ս Անհաջող,

Անաջողակ | Անհաջողակ, Անհաջողություն [ԱԲԲ]:

Անաջողություն |

Աստղայիս (բրբ.) տե՛ս **Աստղալույս** [ԺԲԲ]:

Ավուկ, տե՛ս **Ավելուկ** [ԺԲԲ]:

Աղին | տե՛ս **Եղինջ** [ԱԲԲ]:

Աղինճ |

Աղինջ |

Արյունի, տե՛ս **Արյունալի** [ԱԲԲ]:

Ակոս, տե՛ս **Ատամ** [ԺԲԲ]:

բ) Արևմտահայերեն բառը հղվում է արևելահայերենին, օրինակ՝

գիտնալ, նույնն է՝ **գիտենալ** [ԱԲԲ]:

Կաղանդ (արևմտ.) նույնն է՝ նոր տարի [ԱԲԲ]:

Սառնանույշ | տե՛ս պաղպաղակ [ԺԲԲ]:

Սառնանուշ |

գ) Հնացած, հին, հազվադեպ գործածություն ունեցող բառերը գրականին, այսպես՝

Անցանել, տե՛ս **Անցնել** [ԱԲԲ]:

Գողտր, (հնգ.) նույնն է գողտրիկ [ԱԲԲ]:

Այլապաշտ, տե՛ս **օտարամոլ** [ԺԲԲ]:

Այրամարդկային, տե՛ս **Տղամարդկային** [ԺԲԲ]:

դ) Օտարազգի բառը հղվում է հայերեն բառին, օրինակ՝

Արխիտեկտոր | տե՛ս Ժարտարապետ

Արխիտեկտուրա | Ժարտարապետություն [ԱԲԲ]:

Գեապոտ, տե՛ս **Բոնակալ** [ԱԲԲ]:

Գիսկուսիա, տե՛ս **Բանավեճ** [ԺԲԲ]:

Գիսկ, տե՛ս **Սկավառակ** [ԺԲԲ] ևն:

Հղման կամ վկայակոչման եղանակի նպատակն այն է, որ ա) նորմավորում է լեզվի բառապաշարը և բ) տեղի չի տալիս ավելորդ կրկնությունների, խնայում է անհրաժեշտ տեղը բառարանում, չի նպաստում նրա ծավալի մեծացմանը:

Բացատրության ընդունված այս եղանակներից բացի կան բացատրության այլ միջոցներ, որոնք հատուկ են այս կամ այն բառարանին:

Առ. Մալխապյանցի բառարանում որոշակի սկզբունքով տրվում են նաև հայերեն բառերի արմատները: Եթե հայերեն բառի արմատն այսօր այլևս չի գիտակցվում, փակագծում գնում է այդ արմատը, ինչպես՝

Թափուր (արմ. Թափ-ել),
Խուփն (արմ. Խփել-ի),
Ռոգանել (ոգի, ոգ) ևն:

Հաճախ բարդությունների մի մասը լրիվ չբաժանելով բաղադրիչների՝ Մալխասյանցը կատարում է բառակազմական բացատրություն. Օրինակ՝ **արագայաղթ** (ա-յաղթ) և **արագայագ** (ա-յագ), այս նշանակում է, որ բառի առաջին բաղադրիչը վերջանում է «գա» վանկով, իսկ երկրորդ բաղադրիչը սկսվում է «յաղթ» և «յագ» վանկերով: Սա հետևանք է ուղղագրության անհարմարության: Գրաբար չիմացողը չի գիտակցի **յաղթ** և **յագ** բաղադրիչները: Փակագծի բացատրությունը պիտի դրվեր ժամանակակից ուղղագրությամբ, ինչպես մենք այդ տեսնում ենք -ոյ, -այ վերջավորվող բառերի համար: Այսպես՝ **անգործունայ** (եա), **անդամայոթ** (ույ), **անխնայ** (խը-նա), **գոյք** (ույ), **գոնչոյ** (չո) ևն:

Էդ. Աղայանը որոշ տերմինների բացատրության ժամանակ բերել է նաև դրանց ռուսերեն համարժեքները: Այսպես՝

Դուրս-պրծուկ — 1. Իրեն չվերաբերող՝ ուրիշների խոսակցությանը կամ գործին անհարկի միջամտող մարդ, անտեղի մեջ ընկնող, կոտրած գդալ:
2. Հովանավորների շնորհիվ բարձր դիրքի՝ պաշտոնի համար պատահական մարդ (выскочка):

Ստ. Մալխասյանցի բառարանում տրվում է նաև բառերի ստուգաբանությունը: Ստուգաբանվում են իբրև գլխաբառ բերվող օտարազգի բառերը, որոնք հին և նոր փոխառություններ են: Նշվում է փոխառու՝ սկզբնաղբյուր լեզվում փոխառյալ բառի տառադարձությունը, եթե փոխառությունը միջնորդավորված է, նաև՝ միջնորդ լեզուն: Օրինակ՝

Դեմոկրատիա — Հուռ. demos, ժողովուրդ, և kratos՝ հեղինակություն, ֆր. democratie, ռուս.-ից):

Նաչար — (պարսկ. na, ան, car, դեղ, տանկ.-ից):

Ագենտուրա — (գերմ. agentur, ռուս.-ից) ևն:

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» ևս տրվում է բառերի ստուգաբանությունը: Օրինակ՝

Ակցենտ — լատ. accentus,

Ակտ — լատ. actus,

Բանկիր — ֆր. banquier ևն:

Բառերի իմաստների դասակարգման ու բացատրության հետ մեկտեղ, որպես բառապաշարի առանձին մաս, հիմնական բառահողվածի տակ տրվում ու բացատրվում են նաև ոչ ազատ, կայուն բառակապակցությունները՝ դարձվածքները, որոնք ստեղծվում են ոչ թե խոսելու պահին, այլ գործածվում են որպես նախադասության պատրաստի հատվածներ, արտահայտություններ՝:

Ստ. Մալխասյանցի բառարանը ընդգրկում է մոտ 9 հազար դարձվածաբանական միավոր: Բառարանում ինչպես իմաստների բացատրության, այնպես էլ դարձվածքների բացատրության ժամանակ տրված են սկզբում հին (գրաբարյան) դարձվածքները, հետո՝ աշխարհաբարյան: Այսպես **ականջ** գլխաբառի տակ հեղինակը սկզբում տվել է հին ոճերը (ձը-գեղ զականջ, ականջ ծովու), ապա աշխարհաբարյան ոճերը (ականջ անել, ականջը ծակ, ականջը կտրել, ականջը ձեռի լինել, մեծ կտորը ականջը մնալ ևն): Ստ. Մալխասյանցը ցույց է տվել դարձվածքների իմաստային բոլոր նրբերանգները: Այսպես՝ **Աչք բանալ** — 1. Մեծանալ, գիտակցության գալ: 2. (Զբաղումըքից, փորձանքներից ևն) ազատ զգալ իրան, հանգիստ գտնել ևն: **Աչքը բանալ կն բաց անել**—1. Խելամիտ դառնալ, ուշադիր լինել: 2. Մեկի միտքը բանալ, խելամիտ անել, խորամանկություն սովորեցնել: **Աչքին երևալ** — 1. Երևել, այնպես անել, որ իրան տեսնեն: 2. Իր ուժը ցույց տալ, երկուղ ազդել: 3. Աչքի ընկնել, նկատելի դառնալ, շատ համարվել: 4. Թվալ, առ աչքը երևույթ լինել ևն: **Աչք** գլխաբառի տակ հեղինակը բերել է ժամանակակից լեզվում գործածվող 170 դարձվածք իրենց բոլոր իմաստային նրբերանգներով: Այդ նույն գլխաբառի տակ Լեզվի հնատիտուտի բառարանում բերվել է 197, իսկ Էդ. Աղայանի բառարանում՝ 188 դարձվածաբանական միավոր: «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» ընդգրկվել է մոտ 10 հազար դարձվածաբանական միավոր: Բառարանում բերված են ոչ միայն յուրաքանչյուր դարձվածքի իմաստային նրբերանգները, այլև այդ նրբերանգների համար օրինակներ գեղարվեստական գրականությունից: Այսպես՝ **Ականջ անել, ականջ դնել**: 1) լսել, ունկնդրել: Մուս... ականջ արա, հովիվն է կանչում (Հ. Թ.): Ահա կարդամ ականջ դրեք (Հ. Թ.): 2) Ասվածը նկատի առնել, մեկի ասածին հետևել՝ ուշադրություն դարձնել,

⁷ Н. А. Семенов. Толковые словари русского языка, Киев, 1959, с. 67.

անալ: Ինչքան էլ գիտուն լինի մարդ, էլի մեկ-մեկ պետք է ականջ դնի մեծի խոսքին (Գ. Ս.) ևն: Եվ այսպես թերված է 40 դարձվածքային միավոր իրենց օրինակներով:

Ըդ. Աղայանի բառարանում տեղ է գտել 11 հազար դարձվածաբանական միավոր: Ընդ որում տրված են յուրաքանչյուր դարձվածքի իմաստային նրբերանգները և, ի տարբերություն նախորդ երկու բառարանների, այն համակարգված ձևով է ներկայացված, օրինակ՝

— **Գլուխ** — Գլուխ անցնել մի բանի,

գլխավոր դատնալ, գլխավորել, դեկավարել:

— **Գլուխ բարձրացնել** — 1. Ոտքի կանգնել, կրկին նսխկին դիրքը, հեղինակությունը՝ նշանակությունն ստանալ:

2. Ապստամբել, ըմբոստանալ:

3. Առաջ գալ, երևան գալ ևն:

Ամփոփելով խորհրդային շրջանի հայ գրական լեզվի բացատրական բառարաններում բառերի իմաստների դասակարգման ու բացատրության համառոտ քննությունը, գալիս ենք հետևյալ եզրակացության.

ա) Ստ. Մայիսայանցի «Հայերեն բացատրական բառարանում» բառերի իմաստների դասակարգումը կատարված է հնագույնից նորը: Բառիմաստների բացատրությունը կատարված է հիմնականում նկարագրական-տրամաբանական եղանակով: Կիրառված է նաև բացատրության հոմանիշային (ինչպես նաև հակահիշային) եղանակը: Նրանում լայնորեն ներկայացված է դարձվածաբանությունը:

բ) «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» բառիմաստների բացատրությունը կատարված է նկարագրական-տրամաբանական եղանակով: Հաճախ կիրառվել է նաև բացատրության հոմանիշային եղանակը: Բառարանում ինչպես բառիմաստների, այնպես էլ դարձվածքների բացատրության դեպքում թերվում են բնագրային օրինակներ:

գ) Ըդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» բառիմաստների բացատրությունը հիմնականում կատարված է նկարագրական-տրամաբանական եղանակով: Կիրառվել է նաև բացատրության հոմանիշային եղանակը: Հաճախ տեղիները բացատրելիս տրվում են նրանց գիտական սահմանումները: Բառարանում հնարավորին չափ տրվում է դարձվածաբանական միավորների իմաստային ողջ հարստությունը:

Р. А. МАРГАРЯН—Классификация значений слова и способы их толкования в толковых словарях современного армянского языка.— В годы советской власти в Армении были созданы десятки словарей, в которых исключительное место занимают толковые словари Ст. Малхасянца, авторского коллектива Института языка им. Ачаряна и Э. Б. Агаяна. Главной задачей толковых словарей является классификация и дифференциация, объяснение значений слов. Статья посвящена изучению этих вопросов.